ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.170

ԱՄՓՈՓՈՒՄ

Հ. Թումանյանի ստեղծագործական աշխարհն առանձնանում է իր անկրկնելի ինքնատիպությամբ ու ներդաշնակությամբ, ինչն առաջին հերթին բացատրվում է բանաստեղծի աշխարհաճանաչողությամբ և հայրենի եզերքի ու մարդկանց նկատմամբ ունեցած անսասան սիրով և հավատով: Այն բացառիկ ներդաշնակ և ամրակուռ կառույց է՝ իրական կյանքի գույներն արտացոլող հաստատուն և ակնհայտ խորհրդանշաններով: *Ուստի պատահական չէ, որ նրա թողած գրական հարուստ ժառանգությունը մարմնավորում է հարազատ հայրենիքի անցյալն ու ներկան, գեղարվեստական լավագույն ավանդույթները՝ վերստին հավաստելով, որ ճշմարիտ գրականությունը լիարժեքորեն պետք է արտացոլի ժողովրդի մտքի և հոգու ծնունդ դարավոր զրույցներն ու սովորույթները:* Իրական կյանքից ընտրողաբար վերցված սյուժեներն ու դրվագները գեղարվեստորեն ներկայացնելով ու մեկաբանելով՝ նա այդ ամենն իմաստավորում է առաջին հերթին բարոյական հարթության վրա:

Գեղարվեստական ստեղծագործության նյութ դարձնելով գյուղաշխարհի մարդկանց՝ իրենց ամենօրյա հույզերով, հույսերով ու ապրումներով, Թումանյանը բացարձակապես գյուղագիր չդարձավ, չնայած ժամանակին գրական աշխարհում առանձին գրչակներ անհարկի կարծիքներ էին հնչեցնում, թե Թումանյանն իդեալականացնում է գյուղական իրականությունը՝ փորձելով ստվեր գցել նրա ստեղծագործությունների վրա: Անտեսելով իրականության հետ աղերս չունեցող անհիմն տեսակետները, երբեմն էլ դրանց համարժեք պատասխաններ տալով՝ նա շարունակեց աներեր կանգնած մնալ ազգային մեծ

բանաստեղծի բարձունքին՝ համարձակորեն ձեռնոց նետելով իրականությանը: Գյուղաշխարհի կյանքի բարոյական նկարագիրը հանրության դատին հանձնելուն զուգահեռ՝ բանաստեղծը ճշմարտացիորեն ներկայացնում է մարդկանց սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Նա թեև կատարվող դեպքերի մասնակիցը չէ, սակայն իր պատումին համոզչականություն հաղորդելու նպատակով գեղարվեստական նուրբ հնարք է կիրառում, և պատկերված աշխարհով գերված ընթերցողը ներքուստ անվերջ զգում է հեղինակի բացակա-ներկայությունը: Նա կենսական փաստը վերլուծում է տվյալ պահի սոցիալական խնդիրների և բարոյական արժեքների տեսակետից՝ գեղարվեստական բացառիկ մտածողությամբ ներկայացնելով կյանքն ինչպես որ կա: Հ. Թամրազյանը ճիշտ է նկատել. «Մարդը նրա երկերում, առօրյա ցավերի ու մաքառումների մեջ ապրող սովորական մարդը, հաճախ, շատ հաճախ է վառվում գերերկրային ապրումներով, հոգեկան հրդեհներով» **(Թամրազյան Հ., 1995)**:

Թե «Գութանի երգի» հողագործի, թե՛ պապերի քեֆին ականատես երեխաների /«Հին օրհնություն»/, թե՛ իր ու ժողովրդի դարդից և ցավից հառաչանքով խոսող կյանքի փորձ ունեցող ծերունու /«Հառաչանք»/, թե՛ Անուշի /«Անուշ»/, Մարոյի /«Մարոն»/ և Գիքորի /«Գիքորը»/ ընտանիքները տնտեսական նույն վիճակում են, ծայրահեղ աղքատությունը նրանց կյանքի անբաժան ուղեկիցն է: Ուշագրավ է, որ բանաստեղծի ներկայացրած ճակատագրով դատապարտված հերոսների կործանման հանգամանքները բացարձակապես միանման չեն, իսկ դրդապատճառը գրեթե նույնն է՝ հետամնաց ու խավարի թագավորությունում խարխափող միջավայրը: Այս տեսակետից միանգամայն իրավացի է Դ. Դեմիրճյանը, երբ գրում է՝ «Հ. Թումանյանը գյուղի կամ ժողովրդական բանաստեղծ չէ, որովհետև, ճիշտ է, նա նյութը վերցնում է գավառից, բայց տալիս է համամարդկային գաղափարներ: Նա գուցեավելի ազգային բանստեղծ է, իրոք, այդպես էլ է. Նա մեր ազգի ապրումների անդրադարձումն է» **(Դեմիրճյան Դ., 1919)**: Ի դեպ, գրական հերոսներից շատերն իրական անձնավորություններ են՝«Գիքորը» /1895թ./, «Մարոն» /1887թ./, «Լոռեցի Սաքոն» /1889թ./ և

«Հառաչանք» /1890թ./ ստեղծագործություններն իր տեսած և լսած իրական դեպքերի հիման վրա են գրվել:

Բանալի բառեր և արտահայտություններ. *գյուղական կյանք, գեղարվեստական հնարք, հայրենի գյուղ, ներքին հանգ, իրական կյանք, բանաստեղծ, գյուղ, բնություն, մղձավանջ, կոնֆլիկտ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ մարդու ցավի երգիչ Թումանյանը գյուղական կյանքը պատկերում է իր ողջ ներկապնակով, ուր իրականության գեղարվեստական նկարագրությունն անցյալի մեծարանք կամ փառաբանում չէ: Թե՛ հառաչանքը բնավ չթաքցնող ծերունու, թե՛ Սաքոյի, թե՛ Մարոյի, թե՛ Գիքորի ընտանիքների անբաժան ուղեկիցը ծայրահեղ աղքատությունն է, որովհետև մարդիկ օրվա հացի կարոտ էին դարձել ոչ իրենց կամքով: Այս առումով ավելի տպավորիչ, քան Համբոյի նամակն է անվարձ աշխատող որդուն, դժվար է պատկերացնել. պարտքերի մեջ թաղված և անհուսալի վիճակում հայտնված հայրը «քորփա երեխուց մի քանի մանեթ» փող է խնդրում ընտանիքի հոգսը թեթևացնելու համար. «իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա, խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և նանն ու Զանին տկլորն են» **(Թումանյան Հ., 1978):** Համբոն ու Գիքորը խորհրդանշում են ժողովրդի անցյալն ու ներկան: Մարդ դարձնելու նպատակով հայրը որդուն քաղաք է տանում՝ անցյալից ներկա: Գիքորի կործանման պատճառն ինչ-որ տեղ նաև մարդկային արժեքների բացակայությամբ էր պայմանավորված, որովհետև նրանց առկայության դեպքում պատանին ինչ-որ պահից կարող էր նոր միջավայրին ընտելանալ: Արտաքուստ այն տպավորությունն է, թե Թումանյանը հերոսների ներաշխարհը, նրանց հույզերն ու ապրումներն ամբողջությամբ կամ լիովին բացահայտելու նպատակ չի հետապնդում: Ներկայացնելով կոնկրետ այն հանգամանքները, որոնց պայմաններում ապրում, մտածում և արարում են հերոսները՝ գրողը նրբանկատորեն բացահայտում է նաև նրանց ներքին զգացողությունները, լիովին ցույց տալիս Աստծու հույսին միայնակ մնացած անօգնական գյուղաբնակի ամենօրյա ողբերգությունը: Այսպես. Լոռեցի Սաքոն

թեև գրել, կարդալ չգիտի, սակայն առողջ դատողությամբ զգում է կյանքի բարին ու չարը, կարողանում է թացը չորից տարբերել, իսկ թե հանկարծ տեղից վեր կենա /«Թե՛ գող, թե՛ գազան, հենց դատարկ վախից // Հեռու են փախչում նրա փարախից»/ **(Թումանյան Հ., 1978)**: Մանկահասակ Մարոն մշտապես ուրախանում է Կարոյից ստացած նվերներից, բայց նաև ըմբոստանում է՝ չթաքցնելով նրա մոտ գնալ չցանկանալու վճռականությունը, որոնք լիովին բացահայտում են անպաշտպան մանկան լուռ և չբացահայտված ապրումները: Բանաստեղծի վարպետությունը ստեծագործության հերոսի պատկերման որդեգրած սկզբունքի ընտրություն է՝ կերպարն ամբողջական ներկայացնել գործողության մեջ և իրադարձությունների շղթայում՝ նրա հոգեկան աշխարհում կատարվածի կամ կատարվողի ընկալումը թողնելով ընթերցողին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը գրելիս օգտվել ենք գեղարվեստական գրականության արժևորման քննական, համեմատական և վերլուծական մեթոդներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ճակատագրով դատապարտված հերոսները

Գործողության և իմաստի ավարտվածության տեսակետից «Գիքորը» պատմվածքը դրամատիկ սկիզբ ունի: Առաջին երեք նախադասության մեջ ամեն ինչ ասվում է. «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել: Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք, մի գործ տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում» **(Թումանյան Հ., 1978)**: Հստակ ու հակիրճ ներկայացվում են կռվի նախապատմությունը, հիմնական դրդապատճառը և բուն ընթացքը, ինչն աննկատ հուշում է սյուժեի հետագա ընթացքը: Գիքորը հարազատ գյուղից հեռանալու մասին չի էլ մտածում, ավելին, չի համարձակվում հակադրվել հոր կայացրած որոշմանը, գլխահակ համաձայնում է, չնայած նրբազգաց մայրն ընդվզում է, վատ բան կանխազգալով համառորեն լալիս ու պնդում. «Չեմ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարքը մի գցիլ, չեմ ուզում…» **(Թումանյան Հ., 1978)**:

Պատանին կարոտն աչքերին քայլում էր հոր հետևից, իսկ քաղաքում արդեն համոզված ու հավատացած էր, որ հետդարձի ճանապարհ չուներ, քանի դեռ մի քանի կոպեկ չէր վաստակել և տուն ուղարկել: Այդ տարիքում նրան ավելի շատ մտահոգում էր ինքնահաստատվելու, կյանքում իր տեղը գտնելու հարցը, այդ իսկ պատճառով չէր դժգոհում վաղ առավոտից մինչև ուշ գիշեր տևող անհրապույր և հոգնեցնող աշխատանքից: Միգուցե հոգու խորքում բարձր ու վեհ ցանկություններ և գաղափարներ կային, բայց, իր կամքից անկախ, դրանց մասին չէր բարձրաձայնում, ընդհակառակը, մենության պահերին մտաբերում էր անտառածածկ լեռներում ծվարած հայրենի գյուղը, մանկության ընկերներին, խոտի ու աթարի բույրը, իրենց բազմանդամ ընտանիքը:

Դեռահաս պատանին, որին սկզբում թվում էր, թե քաղաքը հրաշքներով լի աշխարհ է լինելու, այնտեղ իր տեղը կգտնի, կօգնի ընտանիքին, կարճ ժամանակում հասցնում է ճաշակել կյանքի դառնությունները, ինչ-որ պահ չդիմանալով հալածվածի կարգավիճակին՝ մտածում է փախչելու մասին, կարոտով է հիշում հայրենի գյուղը, սակայն մտաբերում է հոր վերջին հորդորները, հասկանում, որ հետդարձի ճանապարհ չունի, առավել ևս, երբ նամակաբեր համագյուղացիները նրան են հանձնում հոր տխուր նամակը: Հերոսը, որ մինչև վերջ էլ մնում է միամիտ երեխա, թեև ասում, խոսում, վերապրածը, տպավորություններն է ներկայացնում, բայց ոչ մի կերպ չի կարողանում համակերպվել քաղաքային կենցաղին ու առօրյային. քաղաքը նրան խորթ էր: Ավանդապահ Գիքորն իրեն հարազատ միջավայրի ծնունդն էր, ուր ձևավորվել էր նրա աշխարհայացքը, ուստի չի կարող անտեսել իրեն հոգեհարազատ բարոյական նորմերը:

Կյանքի խաչուղիներում հայտնված մարդկանց ճակատագրերը նկարագրելով՝ գրողը բացահայտում է ժամանակի էությունը՝ ցույց տալով, որ նրանց ներկան անտեսանելի շղթայով կապված է անցյալին: Պարզամիտ Համբոն համոզված ու վստահ էր, որ որդին քաղաքում գումար կվաստակեր, ընտանիքի հոգսը կթեթևացներ, սակայն Գիքորին թաղելուց հետո, տունդարձին՝

կոնատակին մահացածի շորերը, գրպանում նրա գտած մի բուռ փայլուն կոճակները, նախշուն թղթերը և մի քանի քորոց, ամեն ծառի ու աղբյուրի մոտ յուրովի է վերապրում որդու հետ կապված դրվագներն ու անձայն ողբում զավակի կորուստը: Ցավն ավելի է սաստկանում, երբ հեռվից երևում է գյուղը և նրա վերադարձին սպասող ընտանիքի անդամները՝ «Գյուղից դուրս կանգնած սպասում էին Նանը, Զանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր. –Ալի՛, ալի՛, հե՛ Գիքոլ...» **(Թումանյան Հ., 1978)**: Ի դեպ, Թումանյանի այս պատմվածքի առաջին գրախոս Ավ. Իսահակյանը 1910թ. բարձր է գնահատել գրչակից ընկերոջ՝ հույզերով լեցուն փոքրածավալ ստեղծագործությունը և գրել՝ «Մարդ զարմանում է, թե ինչպես է այս նաիվ պատմվածքը թաքցնում է իր մեջ այնքան լիրիզմ, այնքան անմիջական զգացմունք և այնքան իրական կյանք» **(Իսահակյան Ա., 1910)**:

Հ. Թումանյանը կանխամտածված չի բացահայտում հերոսների հոգեկան ապրումները՝ այն թողնելով ընթերցողին, որպեսզի վերջինս մտովի ներթափանցի նրանց ներաշխարհը, տեղափոխվի միանգամայն անծանոթ ու անհայտ աշխարհը, փորձի հասկանալ և վերծանել մարդկանց ապրումները, զգացումները, հոգեկան ալեկոծումները:

«Մարո» պոեմի մուտքն ահագնացող ցավերից ու աղետներից աչք չբացող և ադաթներով ապրող գյուղի պատկերն է: Գյուղ, որը հպարտ կանգնել է միգապատ լեռների մեջ, ձեռքը ճակատին դրած՝ միտք է անում տխրադեմ, իսկ ջերմեռանդ աղոթող մարդիկ ոչ մի կերպ չեն ընկալում, թե աղետներն ինչո՞ւ են իրենցից անպակաս: Այն ոչ թե մանկահասակ աղջկա, այլ ժողովրդի ողբերգությունն է, որը ներկայացվել է առանց գույները խտացնելու: Իսկ թե ինչո՞ւ է ժողովրդի վիշտը քնարերգության նյութ դարձրել, այդ հարցի պատասխանը գտնում ենք հետևյալ տողերում.

Պաս չենք ուտում մենք այնտեղ
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր.

Բայց միշտ ցավեր նորանոր

Միշտ մի աղետ, մի վնաս

Գալիս են մեզ անպակաս **(Թումանյան Հ., 1978)**:

Անդարձ օրերի նկարագրությանը հաջորդում է Մարոյի ողբերգությունը, որը նրա «սրտին հանգիստ չի տալիս»: Հայրենի եզերքին նվիրված այս պոեմում վեր են հանվում ոչ միայն բնության գեղեցկությունը, այլև դժբախտ մարդկանց, որոնք հասկանալիորեն զարմանում ու դժգոհում են, որ ցավն ու աղետն իրենց մշտական ուղեկիցներ են դարձել: Բանաստեղծն առանց ավելորդ գույների է ներկայացրել մանկահասակ երեխայի հոգեբանությունը: Ինը տարեկան Մարոյի համար կյանքը դեռևս նոր սկսված հեքիաթ է, նա անհոգ հասակակիցներից ոչնչով չի տարբերվում. նրանց հետ վազվզում է ոսկեթև թիթեռնիկների հետևից, անմեղ հայացքով ու մանկական երազանքներով լի աչքերով նայում շուրջբոլորը, սակայն հանկարծակիի է գալիս, երբ իմանում է, թե ինչ նպատակով են համագյուղացի հյուրերն իրենց տուն եկել: Անակնկալի եկած դեռատի աղջնակը ճանաչում էր սարերի վիթխարի հովիվ Կարոյին և մանկական անմեղությամբ սիրում էր իրեն ամեն օր «կանփետ, չամիչ ու խընձոր» հյուրասիրող համագյուղացուն: Նրա ճակատագիրը տնօրինող ծնողներն անբեկանելի որոշում են կայացնում՝ չգիտակցելով իրենց արարքի ծանրությունը: Չդիմանալով ամուսնական կյանքին, նորահարսն ատում է ամուսնուն, ընդվզում և վերադառնում է հայրական տուն և չի թաքցնում հոգու պոռթկումը.

Ես սիրում եմ մայրիկին,

Ես չեմ ուզում դառնալ կին… **(Թումանյան Հ., 1978)**:

Ծնողները սրով են ընդունում այդ որոշումը՝ համարելով, որ աղջնակը խայտառակել է իրենց պատիվը և դուրս են վռնդում տնից: Անօգնական ու հալածական մանկահասակ հերոսուհին բնավ չի հաշտվում վերստին Կարոյի մոտ վերադառնալու մտքի հետ: Հորից հալածված, չոբան Կարոյից փախած, օրերով սոված ու ծարավ, պատառոտված շորերով դեռատի աղջիկը, հանդերում թափառելուց հետո, այլ ելք չգտնելով նետվում է ժայռից: Նրա մահը սգում են

ամենքը, բայց դարձյալ հավատարիմ են մնում հնուց եկած ադաթին և Մարոյին ոչ թե ընտանեկան գերեզմանոցում են թաղում, այլ գյուղից հեռու, առանց ժամ ու պատարագի, մի մենավոր ծառի տակ են հողին հանձնում՝ «Էն մենավոր ծառի տակ // Փոս փորեցին մի խորին // Առանց ժամ ու պատարագ // Մեջը դըրին Մարոյին» **(Թումանյան Հ., 1978)**: Դիտարժան է թումանյանական եզրափակիչ խոսքը՝ «Էն սև քարն էլ տաշեցին, // Բերին, վըրեն քաշեցին» **(Թումանյան Հ., 1978)**:

Արտաքուստ կարող է թվալ, թե «Լոռեցի Սաքոն» պոեմը լեռներում զոր ու գիշեր ոչխարի հոտի հետ կյանքն անցկացնող, պարզունակ մտածողության տեր, բուխարու կողքին թինկ տված հովվի մասին է, որի՝ աշխարհի մասին ունեցած պատկերացումներն իր իսկ ծննդավայրից այն կողմ չեն անցնում: Բանաստեղծը կյանքի իրական փաստը գեղարվեստական փաստ է դարձրել և պոեմն ամբողջությամբ կառուցել է Սաքոյի ապրումների գեղարվեստական վերարտադրման սկզբունքով, որը միտված է նրա հուզական աշխարհի ամբողջական բացահայտմանը: Հերոսի հոգեբանական դրաման հիմնավորված է, որովհետև նրա ապրումները և մտորումները կապված են շրջապատի, ապրած տարիների, անցած ճանապարհի հետ: Ասվածի վկայությունը գիշերային ահասարսուռ լռության մեջ Սաքոյի լուռ մենախոսությունն է. «-Չէ՛, քամին էր էն… էն գիլի շվաք… // Էն աստղեր էին աչքերի տեղակ, // Որ լիսածակից ներս էին ընկել…» **(Թումանյան Հ., 1978)**: Լոռվա ձորը ներկայացվում է յուրովի՝ բնության ամեն մի մասնիկ կերպարանավորելով: Հոնքերը կիտած խորունկ ժայռերը՝ որպես դեմ դիմաց կանգնած հսկաներ, անթարթ հայացքով միմյանց են նայում, իսկ նրանց ոտքերի տակ գալարվելով՝ հոսում է դևի կերպարանք ստացած և քարերի վրայով խելագար թռչող ու իր հին-հին ափերը որոնող Դեբեդ գետը: Իմաստ կա հենց այս հատվածում: Մութ անձավներում հավաքված քաջքերը ծաղրում են դևին, կրկնում նրա ձայնը: Պատկերների հաճախակի փոփոխությունը հոգեբանական նախապատրաստության սկիզբն է: Այդ խորհրդավոր մթության ու չարագուշակ լռության մեջ Սաքոն մենակ է: Գիշերվա

տեսարանն ավելի սարսափազդու է դառնում, երբ լուսնի շողերը մտնում են խավար ձոր, և լուսնյակի լույսի տակ ամեն բան ասես կենդանության նշան է ցույց տալիս: Լոռվա գիշերվա այս խորհրդավոր պատկերներն ընթերցողին նախապատրաստում են բացահայտելու մենակ մնացած Սաքոյի կերպարը և հոգեկան ապրումները: Պարզաբանելով նրա մենակ մնալու պատճառը /սատանի նման այդ գիշեր գործընկեր Գևոն տուն է գնացել/՝ բանաստեղծը նրբանկատորեն ակնարկում է, որ մենության մեջ մնացած մարդու տրամադրությունն աստիճանաբար փոխվում է: Իր կամքից անկախ անհասկանալի տագնապ է պատում նրան, երբ հոգու խորքում արթնանում են հեռավոր օրերի հուշերը, և ծանր պատկերները հաջորդում են միմյանց: Հերոսի ներաշխարհը բացահայտող քնարերգուն թեև ժխտում է վախի գոյությունը /Աժդահա Սաքոն ընչի՛ց է վախենում/ **(Թումանյան Հ., 1978)**, սակայն նրա մենախոսությունը հակառակն է ապացուցում: Ներքին կռիվը ծանր հիշողությունների դեմ, մեկը մյուսից ահավոր պատկերները մեծացնում են կասկածների շղթան՝ նոր ու սոսկալի տեսիլների տեղիք տալով: Գերլարված մթնոլորտում թեև նա ինչ-որ պահ դիմադրում է, սակայն ակամա հիշում է տատի պատմածները չարքերի մասին, որոնք կենդանի կերպարանք են ստանում և շրջապատում են նրան, «խաբում են, կանչում ծանոթ ձայներով»՝ «մեզ մոտ արի հարսանիք», ներկայանում որպես հոքիր, նանի, ազնիվ բարեկամ՝«արի՝ ձվածեղ անեմ…, արի՝ բլիթ տամ…» **(Թումանյան Հ., 1978)**: Լարված ու ծանր մթնոլորտը հոգեկան ցնցման է հասցնում նրան, տագնապն ավելի է սաստկանում, և հոգեբանական կոնֆլիկտը վերածվում է դրամայի: Սաքոն անհույս ճիգեր է գործադրում գիշերային մղձավանջից ազատվելու համար, սակայն միմյանց հաջորդող մտացածին պատկերներն ի վերջո հավասարակշռությունից հանում են նրան, որից հետո կասկածներն ավելի են ահագնանում, խորացնում երկյուղը: Նա վերջնականապես համոզվում է, որ շուրջբոլորը չարքերն են խմբվել, թվում է, թե լսում է նրանց խոսքը, որոնք «չար ժպիտներով» փսփսում են իր հետևից, բորբոքում դիվական հանդեսը: Իսկ երբ տունը լցվում է թվացյալ «թուրք կանանցով, ճիչ-գոռոցով, հրոհրոցով»,

անձնատուր է լինում սարսափին, դադարում է դիմադրել՝ դառնալով տեսիլքների անզոր գերին: Սաքոյի ողբերգական վախճանն անխուսափելի է դառնում: Ինքն իր հետ կռիվ տվող հերոսը բացասական ազդակների ճնշման տակ տեղի է տալիս չար ուժերի առաջ ու սլանում դեպի ձորը, որի նկարագրությունը պոեմի սկզբում լի էր չարագուշակ պատկերներով: Դեպի անհատակ անդունդը սլացող խելագարվածի ականջներում արձագանքվում է խավարի միջից կայտառ ծփացող ալիքների գոռոցը.

Խավարի միջին ծըփում են կայտառ՝
Բըռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար… **(Թումանյան Հ., 1978)**:

Միանգամայն ճշմարտացի է Մ. Մկրյանի այն հիմնավորումը, որ «Սաքոյի խելագարությունը համոզիչ դարձնելու համար Թումանյանը գործադրել է պատճառաբանման բոլոր հնարավոր միջոցները և հասել հոգեկան ամենաբարդ վիճակի շատ տպավորիչ ցուցադրման» **(Մկրյան Մ., 1981)**: Բնության պարզամիտ զավակ է Սաքոն՝ սնոտիապաշտ հավատալիքներով ու նախապաշարումներով. թե կատարած ի՞նչ քաջագործությունների կամ սխրանքի համար է «իգիթ» մականունը ստացել, հայտնի չէ, բայց համագյուղացիները նրա մասին ակնածանքով են խոսում, ինչը նշանակում է, որ նա այդ մականունը զուր չի ստացել: Թեև նա աներկյուղ հսկա է ներկայացվում.

Հապա մի նայի՛ր հըսկա հասակին,
Ո՞նց է մեկնըվել: Ասես ահագին
Կաղընքի լինի անտառում ընկած… **(Թումանյան Հ., 1978),**

որի ահից սարսափում էին ոչ միայն գող ու գազան ու հեռու փախչում նրա փարախից, սակայն մի գիշերվա մեջ ամեն ինչ գլխիվայր շուռ է գալիս:

Սաքոյին հայտնված տեսիլքի տեսարանը՝ չարտահայտված խոհերով ու ապրումներով, մի դրվագ է միայն, սակայն կիրառվող ներքին հանգը ընդգծում է Դև-Բեդի անլռելի շառաչի նմանաձայնությունը, որին հաջորդում են սարսափած հերոսի մտապատկերների նկարագրությունը: Այն պոեմում կատարվող հետագա իրադարձությունների անբաժանելի մասն է և ուղղակի կապ ունի

գործողությունների հետ: Նկարագրության մեծագույն վարպետ Թումանյանն իր տեսածը, լսածն ու զգացածը ներկայացնելիս օգտագործում է ներկապնակի բոլոր գույները, որոնք գեղարվեստական ամբողջություն են կազմում: Ո՞վ է Սաքոն, որին բանաստեղծն անվախություն ու քաջություն է վերագրել և ընթերցողին հավաստիացնում է, որ գող ու գազան լեղապատառ փախչում են նրա ահից ու չեն համարձակվում փարախին մոտենալ: Քաջության ու համարձակության նշույլ անգամ չի մնում, երբ գիշերային խավարում հանկարծակի փայլատակում է կայծակը: Ոչ ոք չի փորձում հասկանալ ծանր իրավիճակում հայտնված հովիվ Սաքոյի հոգու խռովքը, խորհել, թե ինչո՞ւ նա մի ակնթարթում անճանաչելի դարձավ, մարտահրավեր չնետեց անտես դևերին, իսկ կայծակի փայլատակումից հետո միանգամից բանականությունից զրկվեց: Ի դեպ, երբ իրականությունը ներկայացվում է հերոսի աչքերով, այն դառնում է ավելի համոզիչ ու հավաստի: Իրականում աժդահան սնոտապաշտության գերի է, որի կրծքի տակ ոչ այնքան քաջությունն է թաքնված, որքան վախը, որն էլ նրան մի ակնթարթում դարձնում է անմեղ զոհ: Լ. Հախվերդյանը ճիշտ է նկատել. «…Թումանյանն ուրիշ խնդիր չի հետապնդել, քան բացահայտել վախն իբրև հոգեբանական երևույթ, վախ, որ հավասարակշռությունից հանում է մարդուն» **(Հախվերդյան Լ., 1966)**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նահապետական հայ գյուղի կյանքը պատկերող երկերում Հ. Թումանյանը նրբանկատորեն ներկայացնում է հարազատ չնաշխարհիկ գյուղաշխարհի իրականությունը, ճակատագրով դատապարտված մարդկանց հոգեբանությունը, նրանց իրատեսական երազանքներն ու ձգտումները, իսկ տողատակերում արտահայտվում են բանաստեղծի լավագույն գաղափարները, որոնց խորիմաստության շնորհիվ նրա ստեղծագործությունը համաժողովրդական նշանակություն է ձեռք բերում:

Կյանքը բնօրինակից կերտելու և հայրենի եզերքն իր ճանաչած մարդկանցով ներկայացնելու թումանյանական բացառիկ վարպետության շնորհիվ ստեղծվում են բարձրարժեք գրականության կենդանի կերպարներ՝ իրենց առօրյա խոսք ու

զրույցով, գյուղաշխարհն իր բնությամբ, իսկ կերպարակերտման ստեղծագործական այդ եղանակը գրեթե անտեսանելի է դարձնում իրականի և երևակայականի սահմանները:

Կյանքում կատարվող անկանխատեսելի փոփոխություններին զուգահեռ գյուղաշխարհի մարդիկ անելանելի վիճակում էին հայտնվել և փակուղուց դուրս գալու ելքեր չէին գտնում, այդ պատճառով էլ բանաստեղծը, մարդու մեջ մարդկայինը վեր հանելուն զուգահեռ, ներկայացրեց նրանց տառապող հոգիներում ծվարած բյուր գաղտնիքները՝ մարդն ու մարդկայնորեն գեղեցիկն իր ստեղծագործության էությունը դարձնելով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Դեմիրճյան Դ. (1919)**, «Մշակ», հ. 60:
2. **Թամրազյան Հ., (1995)**, Հովհաննես Թումանյան բանաստեղծը և մտածողը, Երևան, «Նաիրի» հրատ.:
3. **Թումանյան Հ. (1978)**, Ընտիր երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
4. **Իսահակյան Ա. (1910)**, «Հորիզոն», հ. 19:
5. **Հախվերդյան Լ. (1966)**, Թումանյանի աշխարհը, Երևան, «Հայաստան» հրատ.:
6. **Մկրյան Մ., (1981)**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

REFERENCES

1. **Demirchyan D. (1919)**, «Mshak» /"Mshak"/, vol. 60
2. **Tamrazyan H., (1995)**, Hovhannes T'owmanyan banasteghc'y' & mtac'oghy' /Hovhannes Tumanyan the poet and the thinker/, Yerevan, "Nairi" edition.
3. **Tumanyan, Hovh. (1978)**, Y'ntir erker /Selected Works/, Yerevan, "Soviet Writer" edition.
4. **Isahakyan A. (1910)**, «Horizon» /“Horizon”/, N 19.

5. **Hakhverdyan L. (1966)**, T'owmanyani ashxarhy' /Tumanyan's world/, Yerevan, “Armenia” edition.
6. **Mkryan M. (1981)**, Hovhannes T'owmanyani steghc'agorc'owt'yowny' /The work of Hovhannes Tumanyan/, Yerevan, "Soviet Writer" edition.

Ani Ghazaryan

HOVHANNES TUMANYAN'S HEROES CONDEMNED BY FATE

Conclusion

Key words and expressions: *rural life, artistic trick, native village, inner rhyme, real life, poet, village, nature, nightmare, conflict.*

H. Tumanyan's creative world is distinguished by its indispensable originality and harmony, which is primarily explained by the poet's knowledge of the world and his unshakable love and faith for his homeland and people. It is an exceptionally harmonious and sturdy structure with constant and obvious symbols reflecting the colors of real life.

Therefore, it is no coincidence that the rich literary legacy he left behind embodies the past and the present of his native homeland, the best artistic traditions, reconfirming that true literature should fully reflect the centuries-old conversations and customs of the birth of the people's mind and soul. By artistically presenting and discussing the plots and episodes selectively taken from real life, he gives meaning to all of that, first of all, on the moral level.

Making the people of the countryside, with their daily emotions, hopes and feelings, characters of his fiction, Tumanyan did not become a writer of rural life at all, although once some pens in the literary world voiced unnecessary opinions that Tumanyan idealized the rural reality, trying to cast a shadow on his works. Ignoring the groundless views that have nothing to do with reality, and sometimes giving adequate answers to them, he continued to stand tall as a great national poet, boldly challenging the reality. Along with presenting the moral description of rural life to the

public, the poet also truthfully depicts the difficult socio-economic situation of the people. Although he is not a participant in the happenings, he uses a subtle artistic trick to make his story convincing, while the reader captivated by the depicted world, can endlessly feel the author's absent presence inside. He analyzes the vital facts from the point of view of social problems and moral values of the moment, presenting life as it is - with exceptional artistic thinking. H. Tamrazyan has noticed correctly: "An ordinary human living in his works, in everyday pains and struggles, is often, very often, burned by supernatural feelings, by mental fires" (Tamrazyan H., 1995).

Both the farmer of the "Plow Song" and the children witnessing the fun of the grandfathers (“Old Blessing”), and the old man with life experience, speaking with a sigh about his and the people's pain and sorrow (“Sigh”), and the families of Anush (“Anush”), Maro (“Maro”) and Gikor (“Gikor”) are in the same economic situation, extreme poverty is an inseparable companion of their lives. It is noteworthy that the circumstances of the destruction of the heroes condemned by the fate presented by the poet are absolutely not the same, while the motive is almost the same - the undermining environment in the backward and dark kingdom. From this point of view, D. Demirchyan is absolutely right when he writes: “H. Tumanyan is not a village or folk poet, because, it is true, he takes the material from the province, but he gives them universal ideas. He is perhaps more of a national poet, indeed he is. He is the reflection of our nation's feelings." (D. Demirchyan, 1919, “Mshak”, No. 60). By the way, many of the literary heroes are real people: the works “Gikor” (1895), “Maro” (1887), “Loretsi Sako” (1889) and “Sigh” (1890) were written based on real events he evidenced and heard.

Ани Казарян

Герои Оганнеса Туманяна, осужденные судьбой

Заключение

Ключевые слова и выражения: сельская жизнь, художественный трюк, родная деревня, внутренняя рифма, реальная жизнь, поэт, деревня, природа, кошмар, конфликт.

Творческий мир О. Туманяна отличается непременным своеобразием и гармонией, что объясняется прежде всего знанием поэтом мира и его непоколебимой любовью и верой к своей Родине и народу. Это исключительно гармоничная и прочная конструкция с постоянными и очевидными символами, отражающими краски реальной жизни.

Поэтому не случайно оставленное им богатое литературное наследие воплощает в себе прошлое и настоящее его родной Родины, лучшие художественные традиции, еще раз подтверждая, что истинная литература должна в полной мере отражать многовековые разговоры и обычаи зарождения народного народа. разум и душа. Художественно изображая и обсуждая выборочно взятые из реальной жизни сюжеты и эпизоды, он придает всему этому смысл, прежде всего, на нравственном уровне.

Делая людей сельской местности, с их повседневными эмоциями, надеждами и чувствами, персонажами своей художественной литературы, Туманян вовсе не стал писателем сельской жизни, хотя когда-то некоторые ручки в литературном мире высказывали ненужные мнения, что Туманян идеализирует сельскую действительность, пытаясь бросить тень на его произведения. Игнорируя беспочвенные, не имеющие ничего общего с действительностью взгляды, а иногда и давая на них адекватные ответы, он продолжал оставаться великим национальным поэтом, смело бросая вызов действительности. Наряду с представлением публике нравственного описания сельской жизни, поэт правдиво изображает и тяжелое социально-экономическое положение народа. Хотя он и не является участником происходящего, но использует тонкий художественный прием, чтобы сделать свой рассказ убедительным, а читатель, очарованный изображенным миром, может бесконечно ощущать внутри себя отсутствующее присутствие автора. Он анализирует жизненные факты с точки зрения социальных проблем и моральных ценностей момента, представляя жизнь такой, какая она есть – с исключительным художественным мышлением. О. Тамразян

правильно заметил: «Обычный человек, живущий в своих произведениях, в повседневных муках и борьбе, часто, очень часто обжигается сверхъестественными чувствами, душевными пожарами» (Тамразян Г., 1995).

И земледелец «Песни о плуге», и дети, ставшие свидетелями веселья дедов («Старое благословение»), и старик с жизненным опытом, говорящий со вздохом о своей и народной боли и горе («Вздох») , а семьи Ануш («Ануш»), Маро («Маро») и Гикор («Гикор») находятся в одинаковом экономическом положении, крайняя бедность является неразлучным спутником их жизни. Примечательно, что обстоятельства гибели обреченных судьбой героев, представленные поэтом, совершенно не одинаковы, а мотив почти тот же - подрыв окружающей среды в отсталом и темном царстве. С этой точки зрения совершенно прав Д. Демирчян, когда пишет: «Г. Туманян не деревенский и не народный поэт, потому что он, правда, берет материал из провинции, но дает им универсальные идеи. Возможно, он больше национальный поэт, и это действительно так. Он — отражение чувств нашего народа». (Д. Демирчян, 1919, «Мшак», № 60). Кстати, многие литературные герои — реальные люди: произведения «Гикор» (1895), «Маро (1887), «Лореци Сако» (1889) и «Вздох» (1890) были написаны на основе реальных событий, которым он был свидетелем и слышанным.

Անի Ղազարյան - ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Ավետիք Իսահակյանի և Հովհաննես Թումանյան գրական ժառանգությունը: Հեղինակ է 10 գիտական հոդվածների և մեկ մենագրության: arpinanyan21@gmail.com

Ани Казарян –НАН РА, младший научный сотрудник Института литературы им. Абегяна, кандидат филологических наук. Область научных интересов: Ав. Исаакян и Ов. Туманское литературное наследие. Автор 10 научных статей и одной монографии. arpinanyan21@gmail.com

Ani Ghazaryan - RA NAS M. Junior researcher of the Institute of Literature named after Abeghyan, PHD. Scope of scientific interests: Av. Isahakyan and Hovh. Tumanian literary heritage. Author of 10 scientific articles and one monograph. arpinanyan21@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 03.07.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 18.07.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ